

N2
21.02.2023թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Ն. Սիմիոյանին

Հարգելի պարոն նախարար

Մեր ընկերությունը Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 07.03.2012թ.-ի N29/073 ընդերքօգտագործման թույլտվության:


Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանին համաձայն աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդում փոշու արտանետումների մշտադիտարկում,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. արտադրական հրապարակի տարածքի հողերի քիմիական կազմ:


Ստորև ներկայացնում եմ 2022 թվականի ընթացքում Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի «Կարմիր ավազ» ՍՊԸ հատկացված տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Կարմիր ավազ» ՍՊԸ
տնօրեն՝

Հրաբխի Շեքերչ
Գ. Բաբաբեկ Ա. Մարտիրոսյան
3 շեշտ 45 Ա.
a.sos.a@mail.ru.
098. 88. 31. 55



Ա. Ալոյան



**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտար- կումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը ¹
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Հանքավայրի տարածք	Անօրգանական փոշի (SiO ₂ 20- 70%)	Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.009մգ/մ ³
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Արտադրական հրապարակի տարածք	Քիմիական կազմ	Տարածքի դիտարկում	2022 թվականի ընթացքում մեկ անգամ	Al 30676մգ/կգ, Si 68279մգ/կգ, P <50մգ/կգ, Cl 661 մգ/կգ, S 7010մգ/կգ, K 5163մգ/կգ, Ca 167963մգ/կգ, Ti 3246մգ/կգ, V 221մգ/կգ, Cr 80մգ/կգ, Mn 520մգ/կգ, Fe 30107մգ/կգ, Co <5մգ/կգ, Ni 96մգ/կգ, Cu

¹Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՄԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները

					<p>51մգ/կգ, Zn 63մգ/կգ, As 11մգ/կգ, Se <5մգ/կգ, Rb 35մգ/կգ, Sr 632մգ/կգ, Y 16մգ/կգ, Zr 137մգ/կգ, Nb 9 մգ/կգ, Mo 229մգ/կգ, Ag <5 մգ/կգ, Cd <5 մգ/կգ, Sn <5 մգ/կգ, Sb <5մգ/կգ, W <5մգ/կգ, Pb 12մգ/կգ, Bi <5 մգ/կգ, Th 15մգ/կգ, U <5 մգ/կգ, LE 684756մգ/կգ:</p>
<p>Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ</p>	<p>Նախատեսված չէ</p>				
<p>Աղմուկ և թրթռում</p>	<p>Նախատեսված չէ</p>				
<p>Ոչ վտանգավոր թափոններ</p>	<p>Նախատեսված չէ</p>				
<p>Վառելանյութերի պահեստարաններ</p>	<p>Հանքավայրի տարածքում վառելանյութի պահեստարաններ չկան</p>				

1	2	3	4	5	6
Ֆիանային լուծույթների օգտագործման հետ կապ- ված ենթակառուց- վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հանքավայրի տեղադիրքը. Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրը գտնվում է 3-6կմ հարավ-արևելք Աշտարակ քաղաքից: Երևանի երկաթուղու կայարանը գտնվում է 18-20կմ հեռավորության վրա դեպի հարավ-արևելք: Բացահանքի կողքից անցնում է Երևան-Գյումրի ավտոմայրուղին:

Երկրաբանական կառուցվածքը.

Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի կազմության մեջ մասնակցում են վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ:

Նրանց կառուցվածքը ներքնից-վերև հետևյալն է.

1. Բազալտներ-անդեզիտաբազալտներ, խարամացված բազալտներ 100մ ընդհանուր հզորությամբ:

2. Հրաբխային խարամներ տարբեր գույների մինչև 100մ հզորությամբ:

3. Ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ և պրոլյուվիալ նստվածքներ մինչև 2մ հզորությամբ:

Հրաբխային խարամները ներկայացված են 7 կոներով: Խարամային կոն N1-ը տեղադրված է Աշտարակից 3կմ հեռավորության վրա դեպի արևելք Երևան-Աշտարակ խճուղուց 0.2կմ հեռավորության վրա: Կոնի հիմքի տրամագիծը կազմում է 400մ, զագաթի մաքսիմալ վերագանցումը հիմքի նկատմամբ կազմում է 45մ: Կոնի լանջը սակավաթեք է 6-80: Խարամային կոնի կառուցվածքին մասնակցում են հրաբխային խարամները, խիտ և ծակոտկեն տեքստուրայի, ինչպես նաև ավազի և հրաբխային մոխրի լապիլները: Օգտակար հանածոն հանդիսանում է հրաբխային ապարների էֆուզիվ պայթեցման գործունեության արդյունք: Խարամը հանդես է գալիս հիմնականում կարմիր և սև գույներով: Խարամի քիմիական կազմը հետևյալն է.

Աղյուսակ 1.

Պարունակությունները, %									
SiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	FeO	CaO	K ₂ O	MgO	MnO	Na ₂ O	SO ₃
53.0	15	5.2	4.2	8	1.8	3.7	0.73	3.5	1.5

Խարամի ծավալային կշիռը տատանվում է 300-410կգ/մ³-ի սահմաններում և միջինը կազմում է 349կգ/մ³, իսկ ամրության ցուցանիշը գտնվում է 50-100կգ/սմ² սահմաններում:

Ժամանակակից նստվածքները ներկայացված են հողաբուսական շերտով և բերվածքային ապարներով՝ տուֆի անդեզիտաբազալտների կտորների ներփակումներով:

Հաստատված պաշարները.

Աշտարակի հրաբխային խարամների պաշարները հաստատված է ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի 30.03.1970թ. N 193 որոշմամբ:

Ըստ կարգերի խարամի պաշարները հետևյալն են (հազ.մ³)՝

A – 1098, B – 3410.6, C1 – 6357.8 և C2 – 678, ընդամենը 11544.4:

Թիվ 2 կոնի խրաբխային խարամների հաստատված պաշարները հետևյալն են (հազ.մ³)՝

A – 57.5, B – 491.8, C1 – 1409.0, ընդամենը 1958.3:

Մակաբացման ապարների հզորությունը Կոն-2 տարածքում կազմում է 0.05մ:

Հանքավայրի շահագործման լեռնատեխնիկական պայմանները.

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Լեռնային աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել շուրջ տարի 5 օրյա աշխատանքային շաբաթով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. աստիճանի բարձրությունը -5մ,
2. աստիճանի թեքման անկյունը՝
 - աշխատանքայինը – 55°,
 - աստիճանը մարելուց հետո – 45°,
3. ընթացքաշերտի լայնությունը – մինչև 10մ;
4. աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը -20մ:

Բացահանքում արդյունահանումը կատարվում է առանց հորատապայթեցման աշխատանքների էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնային համալիրի միջոցով:

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները ներկայացված են ժամանակակից բերվածքային ապարներով:

Աշխատանքային հորիզոններից հեռացվող լցակույտային ապարները T-130 մակնիշի բուլդոզերով կուտակվում են հանքաստիճանի հատակում, էքսկավատորի միջոցով բարձվում ավտոինքնաթափերը և տեղափոխվում արտաքին լցակույտ տեղադրված բացահանքի հյուսիս- արևմտյան մասում:

Հանքավայրի տարածքը ջրագուրկ է: Այստեղ բացակայում են աղբյուրները և մակերևույթային ջրերը: Փորվածքներում գրունտային ջրեր չեն հայտնաբերված: Այս ամբողջը պայմանավորված է հրաբխային խարամների բարձր ջրաթափանցելիությամբ:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է բարձրան աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով:

Ջուրը բերվում է KO-002 ջրցան-վացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում ջրի ցիստեռնով:

Շրջակա միջավայրի հակիրճ նկարագիրը.

Երկրաձևաբանական տեսակետից հանքավայրի շրջանը գտնվում է Արագած լեռնազանգվածի հարավային և հարավ-արևելյան լանջերին: Հարավային լանջերը բնութագրվում են մեծ թեքություններով, ուժգին կտրտված են էրոզիոն հովիտներով և ձորակային ցանցով: Դրանք առկայությամբ պայմանավորված՝ ձևավորված ժամանակ ձևավորվում են պրոյուվիալ զանգվածի հզոր սելավային հոսքեր, որոնք գլաքարա-կոպճային զանգվածը տեղափոխում են նախալեռնային սարահարթերի սահմաններից դուրս և նստեցնում Արարատյան հարթավայրում: Հարավային լանջերի զգալի մասը ծածկված է Թիբինկատար հրաբխի անդեզիտաբազալտային հոսքերով, որոնք մեկը մյուսի վրա դարսվելով, առաջացրել են դարավանդներ 1500մ, 1800մ, 1500-2000մ և 2200-2400մ բարձրությունների վրա: Լավային հոսքերի մակերևույթն անհարթ է, ծածկված

կոնաձև բլուրներով, խառնարաններով, փոսորակներով, առկա են նաև գազային պայթյունների խառնարաններ (հորնիտոսներ): Նմանատիպ ռելիեֆը բնորոշ է նաև Արագած լեռնազանգվածի հարավ-արևելյան լանջերին, որտեղ զարգացած են Աշտարակի լավային հոսքի անդեզիտային և անդեզիտաբազալտային կազմի լավաները:

Շրջանի կարևորագույն կառուցվածքային տարրերից է Եղվարդի սարահարթը: Այս սարահարթի բացարձակ բարձրությունները տատանվում են 1000-1500մ սահմաններում: Ռելիեֆը թույլ բլրակային-ալիքավոր է, որոշ տեղերում բարձրանում են առանձին շլակային կոներ: Սարահարթը դեպի հարավ և արևելք Երևանի շրջակայքում երկու լայն աստիճանների ձևով աստիճանաբար իջնում է դեպի Արարատյան հարթավայր: Սարահարթը հյուսիսային մասից պարփակված է Արայի լեռ հրաբխով, որի լանջերը զառիթափ իջնում են դեպի սարահարթ:

Շրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ, իսկ առավելագույն հորիզոնական արագացումը՝ 0,4g:

Սողանքային երևույթներ Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի տարածքում չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինը գտնվում է հանքավայրից ավելի քան 8կմ հյուսիս-արևելք:

Շրջանի կլիման չոր ցամաքային է, բնութագրվում է ցուրտ ձմեռով և շոգ ամառով: Տարեկան միջին օդի ջերմաստիճանը 11.4°C է: Բացարձակ նվազագույնը -25°C է, առավելագույնը +41°C: Տարեկան միջին օդի հարաբերական խոնավությունը 61% է: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 368մմ է: Տարեկան կտրվածքով հիմնական տեղումները լինում են ապրիլ-մայիս ամիսներին: Ձյան շերտի հաստությունը հասնում է մինչև 1.0մ-ի: Գրունտի սառեցման առավելագույն խորությունը 70սմ է:

Տարածքի խոշորագույն ջրային երակը Քասախ գետն է, որի ակունքները երկու փոքրիկ գետակներ են, որոնցից մեկն սկսվում է Արագածից, իսկ մյուսը՝ Փամբակի լեռնալանջերից: Քասախը վերին հոսանքում դանդաղահոս է և սակավաջուր, իսկ միջին հոսանքում դառնում է բավական ջրառատ ու արագահոս: Գետաբերանային մասում նա բաժանվում է մի քանի բազուկների և թափվում Սև ջուր գետը: Քասախն ունի 89 կիլոմետր երկարություն: Նրա մեջ թափվող վտակներից ջրառատը Ամբերդն է:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, որը հանդիսանում է մթնոլորտային տեղումների հիմնական մասի տեղափոխումը ճեղքավորված լավաների միջոցով դեպի արարատյան ստորգետնյա ջրավազան: Բացի վերը նշվածից ինֆիլտրացվող ջրերի մի մասը մեծ ելքեր ունեցող աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես Քասախ գետ աջափնյա հատվածներում և Ղազարավան-Բազմաղբյուր գյուղերի շրջակայքում: Այդ աղբյուրներից են՝ Ղազարավանի (414լ/վրկ), Բազմաղբյուրի (175լ/վրկ), Սաղմոսավանի (45/վրկ) և այլն: Անցած դարի 70-80 ական թվականներին Կարբի, Ղազարավան և Բազմաղբյուր գյուղերի շրջակայքում կատարված հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է ստորերկրյա ջրերի հոսք, որը կապված է Քասախ գետի հին հունի հետ: Ստորերկրյա ջրերի մակարդակը տատանվում է 35-65մ-ի միջև: Ներկայումս այդ ջրերի մի մասը խորքային հորերի միջոցով օգտագործվում է շրջակա գյուղերի ջրամատակարարման և ոռոգման համար:

Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի շրջանի հողային ծածկույթը ներկայացված է շագանակագույն, բաց-շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերով:

Կիսաանապատային գորշ հողերով ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրտեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%:

Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր: Այս տիպի հողերին բնորոշ է հումուսի չնչին պարունակությունը (1-1.5%):

Աչքի են ընկնում իրենց քարքարոտությամբ, հանդիպում են ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված քարեր: Ռելիեֆի անհարթության, նվազ

բուսականության և անբարելավ ֆիզիկական հատկությունների հետևանքով այս հողերը ենթարկվում են ջրային, մասամբ էլ քամու էռոզիայի:

Շագանակագույն հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Աշտարակի հրաբխային խարամների հանքավայրի տարածքը գտնվում է Արայի և Արագած լեռների ֆլորիստիկ շրջանում:

Տարածքին բնորոշ է կիսաանապատային և լեռնատափաստանային լանդշաֆտները՝ հացազգային և տարախոտա-հացազգային բուսականությամբ: Գերակշռում են *Festuca*, *Koeleria*, *Stipa*, *Galium*, *Elytrigia* տեսակները:

Կիսաանապատային գոտիներին բնորոշ բուսական համակեցություններում զգալի մաս են կազմում վաղամեռ, ճիւղ առաջացնող հացազգիները (անապատասեզ, ցորնուկ, այծակն, դաշտավլուկ):

Տիրապետող բույսը հոտավետ օշինդրն է, տարածված են նաև կապարը, կոխիան, նոնեան, լերդախոտտը: Տարածքի բուսականությունը վաղ գարնանը բավականին փարթամ տեսք ունի, ծաղկում են էֆեմերները՝ առնասպարը, ճոճռուկը, կակաչը, սագասոխուկը, աստղաշուշանը և այլն:

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջանի տափաստանային լանդշաֆտներում կենդանական աշխարհի ներկայացուցիչներից են. ճագարամուկը, նապաստակը, աղվեսը, գայլը, մողեսները, օձերը: Կաթնասուններից հանդիպում են սովորական և սարահարթային դաշտամուկը, սովորական աղվեսի հայկական ենթատեսակը: Մորեխներից քանակապես գերակշռում է սովորական իտալական մորեխը, բնորոշ են ձիուկներ և մթնաթևեր, աղոթարար իրիսը : Բազմաթիվ են բզեզները՝ սև և փոսիկավոր կարաբուսներ, գերեզմանափորը, գլաֆիրուսները, բրոնզաբզեզները :

Աշտարակի հրաբխային խարամների հանքավայրի շրջանի վտանգված էկոհամակարգերի և բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունից հետևում է, որ բուն հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները չեն հանգեցնի էկոհամակարգերի վրա նոր, զգալի բացասական ճնշումների դրսևորմանը:

Հանքավայրի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Հանքավայրի տարածքում չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Արագածոտնի մարզում հաշվառված են «Տափակ բլուր» լիպարիտային գմբեթը, «Բազալտե արև» ճառագայթաձև անջատումը, «Տատիկ» քարե բնական քանդակը, «Փոքր Արտենի» հրաբուխը, «Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ

տեքստուրային ներփակումները, Արայի լեռան խառնարանը, «Անանուն» ժայռ-մնացուկները, «Անանուն» էրոզիոն աշտարակը, «Չինգիլային դաշտ» քարե կուտակումները և «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոնը:

Աշտարակի հրաբխային խարամների հանքավայրի հեռավորությունը նշված բնության հուշարձաններից կազմում է 12-ից 53կմ, հետևաբար արդյունահանման աշխատանքները չեն կարող որևիցե կերպ ազդել հուշարձանների վրա:

Բնապահպանական միջոցառումների բնութագիր. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվում է մոտակա բնակավայրերում:
- Կենցաղային աղբը հավաքվում է հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր:
- Մեքենաների վրա տեղադրված են արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքեր :
- Փոշենստեցման նպատակով աշխատանքների ընթացքում կատարվում է ջրցանում հանութային հատվածի և ճանապարհի երկայնքով:
- Կեղտաջրերը հավաքվում են հորատիպ գուգարանում, որը պարբերաբեր դատարկվում է հատուկ ծառայության ուժերով:
- Խախտված լանդշաֆտի վերականգնում, որի նպատակով յատարվում են հատկացումներ շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին:
- Իրականացվում է ընդերքօգտագործման թափոնների կառավարում :
- Նախատեսված են բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան:

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ :
- Նախատեսված է պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
 - Շրջակա միջավայրի մոնիթորինգ, որը իրականացվում է ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի №191-Ն որոշմամբ սահմանված կարգով: